ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.)

Հիմնաբառեր. Արցախ, ԵՊՀ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, դասախոս, ուսանող, շրջանավարտ, ազգային հերոս, Մարտակերտ, Շուշի:

Հոդվածում համապատասխան փաստերի վերլուծությամբ ներկայացվում է Երևանի պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողության և շրջանավարտների ակտիվ մասնակցությունը մարտնչող Արցախին օգնության հարցում: Արցախում և ՀՀ սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ստիպեց մայրաքաղաքում գործող բուհերի, առաջին հերթին՝ ԵՊՀ մի շարք ֆակուլտետների ուսանողներին կիսատ թողնել համալսարանական ուսումնառությունը, ստեղծել կամավորական ջոկատներ և մեկնել ռազմական գործողությունների շրջաններ: Նրանք, ովքեր մնացին համալսարաններում և մյուս բուհերում, մեր ժողովրդի հետ միասին ամեն կերպ աջակցեցին մարտնչող Արցախին: Համալսարանականները կազմակերպեցին ոչ միայն ուղղաթիռային չվերթներ՝ Արցախ հասցնելով հագուստ, սննդամթերք, ռազմամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

1990-ական թթ. սկզբներին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում ստիպեց մայրաքաղաքում գործող բուհերի, առաջին հերթին՝ ԵՊՀ մի շարք ֆակուլտետների ուսանողներին կիսատ թողնել համալսարանական ուսումնառությունը, ստեղծել կամավորական ջոկատներ և մեկնել Արցախ[1], ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում և մյուս բուհերում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: Միայն 1988-1991 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին 20-ից ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հագուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ: ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի աշխատակիցներ Միսակ Մարտիրոսյանի և Արմանդ Ռոստոմյանի ջանքերով հրացանների համար կոտորակ էին պատրաստում, կապարի գնդակներ ձուլում՝ Արցախ ուղարկելու համար, իսկ քիմիայի ֆակուլտետի դասախոսներ Հելբիկ Հակոբյանը և Կարապետ Դավթյանը առաջինն էին, որ Հայաստանում սինթեզեցին հրթիռային վառելանյութ:

Զգալի էր նաև ԵՊՀ օգնությունը Արցախի պաշտպանության պետական կոմիտեին[2]: ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար Յու. Մկրտումյանի ջանքերով ոչ միայն արգելվել էր խորհրդային զորքերի մուտքը ԵՊՀ, այլև կազմակերպվել և Եղեգնաձորից թիկնոցներ՝ յափնջիներ էին բերվել ԵՊՀ, որտեղ էլ դրանցից կաղապարներով որսորդական հրացանների համար խից էին պատրաստում և հագուստի հետ միասին ուղարկում Արցախ: Ցավոք, համալսարանականներից և մյուս բուհերից շատերը մարտի դաշտից չվերադարձան: Նրանց թվում էր 1990 թ. փետրվարից համալսարանականների ուժերով կազմավորված

* Հոդվածը ներկայացվել է 18.05.2021 թ., գրախոսվել՝ 19.06.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան, Ե., 2011, էջ 8:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

«Անկախության բանակի» հրամանատար, համալսարանի դասախոս Լեոնիդ Ազգալդյանը: Հրամանատարը զոհվեց 1992 թ. հունիսի 21-ին Մարտակերտի Տոնաշեն գյուղում՝ թշնամու դեմ անհավասար կռվում[1]: Նա հետմահու պարգևատրվել է ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշաններով[2]:

Արցախյան պատերազմի սկզբում իր քաջագործություններով աչքի ընկավ ԵՊՀ 11 տարվա դասախոս, ինժեներ-երկրապահ Սիմոն Աչիքգյոզյանը: Գիտության անխոնջ մշակը 1989 թ. անդամագրվել է «Արաբո» կամավորական ջոկատին և մասնակցել Եղեգնաձորի ու Նոյեմբերյանի շրջանների և սահմանամերձ այլ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, ապա մեկնել Արցախ (Շահումյանի շրջան)՝ ստանձնելով Մարտունաշենի պաշտպանության ջոկատի հրամանատարությունը: 1990 թ. Ս. Աչիքգյոզյանն ընտրվել է Երևանի քաղխորհրդի պատգամավոր, մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերին: Նա իսկական հերոսություն գործեց Մարտունաշենի ինքնապաշտպանության ժամանակ, որտեղ էլ զոհվեց 1991 թ. ապրիլի 30-ին՝ Արցախը հայաթափելու «Օղակ» գործողությունը կանխելիս[3]: Նա 1996 թ. սեպտեմբերին հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Արցախյան պատերազմում քաջաբար կռվեցին և հերոսի մահով ընկան ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողներ, ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը, հետմահու «Արիության համար» մեդալով պարգևատրված Վարդան Դալլաքյանը, Զաքար Ավանեսյանը, ֆակուլտետի գիտաշխատող Վարդան Բախշյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող, հետմահու «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով պարգևատրված Պետրոս Ղևոնդյանը, տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող Վարդան Հովհաննիսյանը, իրավաբանության ֆակուլտետի ուսանող, 1990 թ. Երևանի քաղխորհրդի պատգամավոր Տիգրան Սարգսյանը, նույն ֆակուլտետի ուսանող Վարդան Ստեփանյանը (Դուշմանը) և ուրիշներ: ԵՊՀ 30 ուսանող ազատամարտիկներ նահատակվեցին Արցախի ազատագրության համար մղվող կռիվներում[4]:

Պատմության ֆակուլտետի մեկ այլ խիզախ ուսանող՝ Վարդան Դալլաքյանը, ծառայելով Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակում, իր մարտական փորձը լավագույնս կիրառեց Արցախյան պատերազմում: Մարտնչել է Բերդաձորում, Կարմիրում, Քարվաճառում, զոհվել է 1994 թ. հուլիսին՝ Քարվաճառի շրջանի ազատագրական մարտերի ժամանակ, Ղամշլու գյուղի մատույցներում: Պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: ԵՊՀ պատմության ֆակուլտետում նրա անունով լսարան է անվանակոչվել[5]:

Խորհրդային բանակում է ծառայել նաև հերոս ազատամարտիկ հրամանատար, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի սան Պետրոս Ղևոնդյանը: 1988 թ. սկսված Արցախյան շարժման առաջին օրերից Պ. Ղևոնդյանը զինվորագրվել է հայրենիքի պաշտպանության գործին: 1991-1992 թթ. Պ. Ղևոնդյանը մասնակցել է Ղուշիլլարի, Մալիբեյլիի, Լեսնոյի և հարակից գյուղերի ազատագրման մարտերին: Շուշիի ազատագրման ժամանակ նշանակվել է Շուշվա առանձնակի գումարտակի հրամանատարի տեղակալ: 1993-1994 թթ. մասնակցել է Հադրութի, Ֆիզուլու, Ջեբրայելի, Զանգեզուրի ազատագրական մարտերին, Քարավաճառի շրջանի Օմարի լեռնանցքի կռիվներին: Զոհվել է 1994 թ. փետրվարին: Պ. Ղևոնդյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: Նրան շնորհվել է «Արցախի հերոս» կոչում և «Ոսկե արծիվ» շքանշան: Նրա անունով են անվանվել մի քանի միջնակարգ դպրոցներ ՀՀ-ում և Արցախում, ինչպես նաև ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը[6]:

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 90; Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 1, Ե., 2005, էջ 35:*
[2] *Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 12:*
[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 13-14:*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:*
[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 37-38:*
[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 51-52:*

1972 թ. հունվարին Երևանում է ծնվել հայոց ազատամարտի մեկ այլ նվիրյալ՝ Վարդան Հովհաննիսյանը: ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Վ. Հովհաննիսյանը 1992 թ. անդամագրվել է Վ. Սարգսյանի հավաքագրած «Արծիվ» մահապարտների ջոկատին: Գումարտակի կազմում նա մասնակցել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չլդրան, Դրմբոն, Հարությունագոմեր բնակավայրերի ազատագրման մարտերին, զոհվել նույն թվականի սեպտեմբերին՝ Վաղուհասի բարձունքի ազատագրման ժամանակ: Նրա աճյունն ամփոփված է Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնում[1]:

Խորհրդային բանակում մարտական փորձառության անցած հետախուզական ջոկատի հրամանատար Տիգրան Սարգսյանը ծնվել է 1965 թ. ապրիլին Երևանում: Ավարտելով Երևանի թիվ 162 միջնակարգ դպրոցը՝ ծառայել է խորհրդային բանակում: 1985 թ. զորացրվելուց հետո ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ[2]: Ակտիվորեն մասնակցել է ազգային-ազատագրական շարժմանը, հիմնադրել է «Մեծ Հայք» հայրենասիրական կազմակերպությունը, իսկ 1990 թ. փետրվարից սկիզբ է դրել «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի կազմավորմանը՝ իր հաստիքային կառուցվածքով, սպառազինությամբ և դրոշով: Տ. Սարգսյանը, ընտրվելով գնդի շտաբի պետ, ռազմական խորհրդի անդամ, մասնակցել է Երասխավանի, Վայքի, Սիսիանի, Խնձորեսկի, Նոյեմբերյանի պաշտպանական մարտերին: Նրա ղեկավարությամբ մշակվել և իրականացվել են Հյուսիսային Արցախի՝ Շահումյանի շրջանի Էրքեջ, Մանաշիտ, Բուզլուխ գյուղերի ինքնապաշտպանական մարտերը: 1990 թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի պատգամավոր՝ աշխատանք տանելով իրավաբանական հանձնաժողովի կազմում: 1991 թ. նոյեմբերին Թոդան գյուղի հակառակորդի կրակակետերի ոչնչացման ժամանակ ծանր վիրավորվել է և դեկտեմբերին կնքել իր մահկանացուն: Նրա աճյունը ամփոփված է «Եռաբլուր» հուշահամալիրում: Նա հետմահու արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանին: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է նրա անունով[3]:

ԵՊՀ նույն ֆակուլտետի ուսանող էր նաև քաջակորով ազատամարտիկ Վարդան Ստեփանյանը (Դուշմանը): Նա ծնվել է 1996 թ. մարտին Երևանում: Երևանի թիվ 32 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1984-1986 թթ., ծառայել է Աֆղանստանում տեղակայված խորհրդային բանակային ստորաբաժանումներում, կուտակել մարտական ծառայության հարուստ փորձ: Նա իր ցուցաբերած քաջագործության համար 1986 թ. մարտին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: 1989-1992 թթ. Վ. Ստեփանյանը մասնակցել է Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի, Արարատի, Վարդենիսի, Գորիսի և ԼՂՀ ինքնապաշտպանական մարտերին, Խոջալուի, Շուշիի, Լեսնոյի, Կրկժանի, Մալիբեյլուի, Բերձորի, Մարտակերտի, Ասկերանի, Բերդաձորի և այլ բնակավայրերի ազատագրմանը: Նա զոհվել է 1992 թ. հուլիսին ԼՂՀ Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի համար մղվող մարտերում: Գյուղի մոտակայքում կանգնեցված է հուշակոթող՝ նվիրված Վ. Ստեփանյան հիշատակին: Վ. Ստեփանյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի լսարաններից մեկը անվանակոչվել է նրա անունով[4]:

Արցախին օգնության հասցնելու գործում մեծ է նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի դերը, որը, 1990 և 1991 թթ. ապրիլից սկսած, բազմիցս վտանգների ենթարկվելով, Արցախի և ՀՀ սահմանամերձ շրջանների կամավորական ջոկատներին էր հասցնում ոչ միայն հաղորդակցության սարքեր՝ «Ալենկո» տիպի հաղորդիչներ, այլև անհրաժեշտ սննդամթերք, հատկապես մասուր, ուրց, թթի օղի, տաք հագուստ և այլն: Հետագայում նա Արցախում բազմիցս կազմակերպել է ծառատունկեր[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 46:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 64-65:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 64-65:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 67-69:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 81-83:

1992-1993 թթ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց շարժունակ և կարգապահ բանակ[1]: 1992 թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով ազդարարեց Ազգային բանակի ստեղծման սկիզբը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության գունդը և հանրապետական զինկոմիսարիատը[2]: Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվեցին ավելի ուշ: Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը (1959-1999)[3]: Նա, արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, կամավորների մեծ մասի սիրված հրամանատարն էր: Ազգային բանակի ստեղծման գործում մեծ է նրա ներդրումը:

Արցախի աջակցության գործում իրենց նպաստը բերեցին նաև Մանկավարժական համալսարանի ուսանողները, շրջանավարտներն ու դասախոսները, որոնց մի մասը մայրաքաղաքի բնակիչ էր: Արցախյան 1991-1994 թթ. պատերազմի ընթացքում զենք-զինամթերքի հայթայթման և մատակարարման գործում ակտիվություն ցուցաբերեցին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսները՝ ՀՀ ԱԺ պատգամավոր, դոցենտ Հ. Հարությունյանը, դոցենտներ Մ. Սահրադյանը, Ա. Ղուշչյանը, Բ. Սիսիանը և ուրիշներ: Պրոֆեսոր Լ. Հարությունյանը խնայած անձնական միջոցներով մի քանի անգամ սննդամթերք, զինվորական հանդերձանք և այլ պարագաներ ուղարկեց Արցախ: Համալսարանի 17 ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ իրենց մահկանացուն կնքեցին Արցախյան ազատամարտում: Նրանց թվում էր ՀՀ ազգային հերոս, քաղաքական գործիչ, հրապարակախոս, դերասան Մովսես Գորգիսյանը, որը, որպես անկախության բանակի զինվոր, զոհվեց 1990 թ. հունվարի 18-ին Երասխավանի մարտերում: 1994 թ. Մարտակերտի Կարմիրավան գյուղի մարտերում զոհվեց դասախոս, ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստճանի շքանշանակիր, քանդակագործ, ավագ լեյտենանտ Գևորգ Համբարձումյանը[4]:

Սերժանտ Կարեն Հարությունյանը նույնպես ծնունդով երևանցի էր, մասնակցել է Մարտակերտի գյուղերի ազատագրական կռիվներին և զոհվել Մարտակերտում 1994 թ.: Իրենց քաջագործություններով աչքի է ընկել երևանցի, նույն բուհի գծանկարի ամբիոնի դասախոս Աղվան Մխիթարյանը, որը մասնակցել է Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի, Ֆիզուլու մարտական գործողություններին, պարգևատրվել է 1992-1994 թթ. «Մարտական գործողությունների մասնակից» մեդալով: Նրա գործընկեր, նույնպես երևանցի Արմեն Մուշեղյանը բուհն ավարտելուց հետո աշխատել է Պռոշյանի անվան միջնակարգ դպրոցում որպես նկարչության և գծագրության ուսուցիչ: Նա Շուշիի առանձնակի գումարտակի կազմում մասնակցել է ԼՂՀ Մարտակերտի և Աղդամի տարածքների ազատագրական, մարտական գործողություններին, կռվել մինչև հրադադարը: Իրենց քաջագործություններով աչքի են ընկել երևանցիներ կապիտան, ՀՀ ՆԳ «Միլիցիայի գերազանցիկ» մեդալակիր Վահան Ավետյանը, որը մասնակցել է Ասկերանի, Մարտակերտի և Աղդամի տարածաշրջանի մարտական գործողություններին, ռեժիսոր Միքայել Ղազարյանը, որը մասնակցել է Լաչինի շրջանի մարտական գործողություններին, Անդրանիկ Ոսկանյանը[5], որը մասնակցել է Գետաշենի տարածաշրջանի մարտական գործողություններին, դասախոս Արթուր Մարտիրոսյանը և ուրիշներ:

---

[1] *Տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, էջ 54-64:*

[2] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 6-9:*

[3] *Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:*

[4] *Տե՛ս Պատրիկյան Հ., Արյան կանչով, Երևան, 2015, էջ 3-11:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 192-200:*

Արման Եղյանը, ծնվելով Երևանում, ավարտելով բուհը, աշխատել է թիվ 94 պրոֆտեխուսումնարանում՝ որպես վարպետ, 1990 թվականից մասնակցել է Երասխավանի, 1991 թ.՝ Հայաստանի սահմանամերձ գյուղերի համար մղվող մարտական գործողություններին, Շուշիի ազատագրական մարտերին՝ իբրև հրամանատարի տեղակալ, ապա՝ Մարտակերտի ինքնապաշտպանական մարտերին[1]: Նիկոլայ Դավթյանը, ծնվելով Երևանում, ավարտել է բուհի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի նորաբաց բաժինը, աշխատանքի անցել մշակույթի նախարարությունում, ապա, որպես հեռուստաընկերության գլխավոր ռեժիսոր, մեկնել է Արցախ 5-րդ բրիգադի կազմում, մասնակցել մարտական գործողություններին: Ամենաթեժ կետերում աչքի է ընկել քաջագործություններով[2]:

Արցախի օգնության գլխավոր կազմակերպիչներից էր ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դոցենտ Նորիկ Գալստյանը: Նրա տվյալներով Արցախի պաշտպանության կոմիտեին Երևանի պետական համալսարանի կոլեկտիվը օգնել է ոչ միայն զինամթերքի մեծ պաշարով, այլև հայթայթել է 1200 ձեռք զինվորական հագուստ՝ բաճկոն, տաբատ, զինվորական կոշիկներ և գլխարկ, համալսարանում կազմակերպել և ֆիզիկայի դասախոս Միսակ Մարտիրոսյանի ջանքերով կարել են 8000 անձրևանոց և Արցախ ուղարկել քնապարկերի ու վրանների հետ[3]: Նրա տեղեկությունների համաձայն՝ Գետաշենը համալսարանի օգնությունը ստացել է ըստ պահանջի:

Հայկական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծված կամավորական ջոկատները պետական կառույցում ընդգրկելու համար ՀԽՍՀ նախարարների խորհուրդը 1990 թ. օգոստոսի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշումը[4]: Իրավական այս հիմքի վրա էլ 1990 թ. սեպտեմբերին Երևանում կազմավորվեց ՀՀ ներքին գործերի նախարարությանը կից Հատուկ գունդը, որի կազմում ընդգրկվեցին Երևանի, Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի, Մեղրու և այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը[5]: Այդ վաշտերը կռվեցին ՀՀ և ԼՂՀ գրեթե բոլոր ռազմաճակատներում: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում զոհվեցին 159 մարտիկներ, այդ թվում՝ նաև գումարտակի հրամանատար, Հայաստանի ազգային հերոս, երևանցի Ջիվան Աբրահամյանը[6]: Կամավորական ջոկատների տարերայնորեն կազմավորման և բնակչության ձեռքին մեծաքանակ զենք հայտնվելու արդյունքում ի հայտ եկան նաև չվերահսկվող զինված խմբավորումներ, որոնց գործունեությունն ապակայունացնում էր Հայաստանի ներքին դրությունը: Այդպիսի մի զինված անհնազանդության ժամանակ՝ օգոստոսի 29-ին՝ դեպքերի հետագա սրումն արգելելու նպատակով բանակցությունների մեկնելիս, զոհվեցին Վիտյա Այվազյանն ու Գեղազնիկ Միքայելյանը՝ իրենց կյանքի գնով սթափեցնելով բոլորին ու կանխելով հնարավոր արյունահեղությունը: Նրանց հետմահու շնորհվեց «Ազգային հերոսի» կոչում[7]: 1991 թ. ապրիլի 26-ին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր մինչև 50 տարեկան, կամավորական սկզբունքով հանրապետության պաշտպանության գործին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիների վրա: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա էլ ավելի ուշ ստեղծվեց պաշտպանության նախարարությունը[8]: Վ. Սարգսյանի անմիջական

---

[1] *Տե՛ս նույն տեղում:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 207-231:*

[3] *Տե՛ս Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, էջ 89-90:*

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 298, թ. 1:*

[5] *Տե՛ս Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40; ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406, թ. 8, 9:*

[6] *Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), էջ 13-14:*

[7] *Տե՛ս Օհանյան Ս., նշվ. աշխ., էջ 41:*

[8] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 317, թ. 1,2:*

նախաձեռնությամբ հայոց բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: 1992 թ. մայիսի 22-ին Նուբարաշենում տեղի ունեցավ ՀՀ առաջին դեսանտագրոհային գնդի երդման արարողությունը: Մայիս-նոյեմբերին ստեղծվեցին ՀՀ ԶՈՒ կապի առաջին զորամասը, ավարտվեց ՀՀ ԶՈՒ ավիացիոն, հակաօդային, ինժեներական, տանկային, քիմիական, հրթիռահրետանային, հետախուզական, ռազմաբժշկական զորամասերի ձևավորումը: Նույն թվականի օգոստոսի 30-ին սպարապետ Վ. Սարգսյանի կոչով մայրաքաղաքից և մարզերից հավաքագրված շուրջ 500 ազատամարտիկներից ստեղծվեց «Արծիվ-մահապարտների» գումարտակը, որը վճռորոշ դեր խաղաց Արցախի հյուսիսարևելյան ճակատում՝ բեկում մտցնելով ռազմական գործողությունների մեջ՝ ռազմաճակատի այդ հատվածում կասեցնելով թշնամու հարձակումը: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992 թ. մայիսի 28-ին Երևանի Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում առաջին անգամ զորահանդես անցկացրեց և տվեց առաջին զինվորական երդումը:

Այսպիսով՝ ԵՊՀ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ և մայրաքաղաքում գործող այլ բուհերի ու ուսումնական հաստատությունների ուսանողները, շրջանավարտները և պրոֆեսորա-դասախոսական կազմը Արցախյան պատերազմի առաջին օրերից սկսած բազմակողմանի օգնություն ցուցաբերեցին մարտնչող Արցախին՝ ապահովելով մեր ժողովրդի հաղթանակը Արցախյան պատերազմում:

Эдик Минасян, Артавазд Дарбинян, ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). В статье, на основе анализа соответствующих фактов, представлено активное участие профессорско-преподавательского состава, студентов и выпускников Ереванского государственного университета и Армянского государственого педагогического университета им. Х. Абовяна в Первой Арцахской войне. Из-за развязанной Азербайджаном войны в Арцахе и в приграничных районах Армении, многие студенты столичных вузов, в частности и в первую очередь, ряда факультетов ЕГУ, были вынуждены прервать учебу и, в числе добровольческих отрядов, отправиться в районы военных действий. Те же, кто остались, наряду со всем народом, всеми силами содействовали воюющему Арцаху, организовывали вертолетные перевозки гуманитарной помощи, отправляя одежду, еду, боеприпасы и предметы первой необходимости.

Ключевые слова: Арцах, ЕГУ, Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, преподаватель, студент, выпускник, национальный герой, Мардакерт, Шуши.

Edik Minasian, Artavazd Darbinian, THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994). The article presents the analysis of relevant facts about the active participation of the teaching staff, students and graduates of Yerevan State University and Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, in helping Artsakh in its struggle. The war unleashed by Azerbaijan in Artshakh and the bordering areas of the Republic of Armenia, forced the students of operating universities in the capital, first of all a number of YSU faculties, to leave the university studies, create volunteer detachments and move to military operations zones. Those who stayed in universities, supported the fighting Artsakh in every possible way. The university students organized helicopter flights, delivering clothes, food, ammunition and basic necessities to Artsakh.

Keywords: Artsakh, YSU, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, lecturer, student, graduate, national hero, Martakert, Shushi.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200